Ե. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 14 ՕԳՈՍՏՈՍ 1902 — ԹԻՒ 442

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 ֆ.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի
Վեցամսեայ 8
համար տարեկան 15

Ամերիկայի համար
Տարեկան 3 տ.
Վեցամսեայ 1.50 »

Տարեցուցակի տողը առանձին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեք անգամ տպելու համար 20 ս. զեղչ կըլլայ։

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին։
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie

—o—

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ձեռքի
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԴՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԼԷ

ՆԱԹԱՆ ԱՍԻՐԽԱՆԵԱՆ

Շատ մատչելի գներով դասեր կուտայ դաշնակի, ջութակի վրայ ածելու նաեւ երգեցողութեան։ Փափագողները կրնան դիմել իրեն։ «Պալքանքիյ» փողոց թիւ 8 կամ թէ «Շարժումի» խմբագրութեան։

ԱԶԴ

ՀԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Փ. Պօլիս

Քաղաքիս Հայ Մասնաւոր Վարժարանի երրորդ տարեշրջանը պիտի սկսի յառաջիկայ սեպտ. 2ին, Բշ. օր։

Իրենց զաւակները նոր արձանագրել տալ ուզող ծնողներէ կը խնդրուի որ, առաւօտները ժամը 10—12 և երեկոները ժամը 5—7 հաճին դիմել վարժարան, որ կը գտնուի Գուլկ. Մայր եկեղեցւոյ դիմաց, «Ուչիթելքա—Տրուժպա»յի կից։

Օտար քաղաքներէ եւս աշակերտ կընդունինք ծանօթ ընտանիքներու մէջ զանոնք տեղաւորելու և անոնց վարք ու բարքին վրայ հսկելու հոգը ստանձնելով։

Ուսուցչական Մարմին
Հայ Մասնաւոր Վարժարանի

Ծանօթ. — Ընդունելութեան պայմաններու և ուսմանց ծրագրի մասին տեղեկութիւններ ստանալու համար, օտար քաղաքներէ դիմել հետեւեալ հասցէին։

Կ. Պիսնեան
Ինսպիդիդոր
Ֆիլիբաբլը

ՍՈՂՈՒՆՆԵՐԸ

Հ. սան Շէֆքի Գուրպէթ օղլուն, «Իրաւունք»ի Թրքացած խմբագիրը իր մատնիչական կոչին հաւատարիմ մնալով, կատարել է իր զրպարտիչ մատնիչի դերը։

Երկուշաբթի երեկոյեան դէմ, երկրորդ քաղաքապետ պրիստավի կողմից, ամենայն քաղաքավարութեամբ, հրաւիրվում եմ ոստիկանատուն։ Այնտեղ իմանում եմ որ Սուլթանի հաւատարիմ Սան Գուրպէթ օղլուն, Թրքական դատարակութեան այդ հարազատ արտադրութիւնը, մի ահագին ամբաստանագիր է ներկայացրել իմ դէմ։ Նա գրաւոր կերպով յայտարարել է որ ես զինքը ծեծող Մեսրոբ Վարժապետեանին կանչել եմ և կաշառել եմ իրեն, Գուրպէթեանին սպանի։

Ահա տաճկական այդ զըզելի ստրուկի քաջութիւնը. ահա այդ մինչեւ ղուղն ու ծոծը թրքացած և ատրճանակը գրպանում թափառող վայրենու հերոսութիւնը։ Զրպարտելով է ուզում վրէժ լուծել ինձնից. սուտ մատնութիւններով է ուզում ինձ ջնջել, իմ խարազանից ազատվել. այն խարազանից որ խաչեց ու դռդեց և դեռ շատ պէտք դաղի դրա հատ կաչին։

Անզօր միջոց. Գուրպէթ օղլու, և դուք այլ յայտնի ու անյայտ Գուրպէթեաններ։ Բուլգարիան Թուրքիա չէ և ոչ նրա պաշտոնեաները Թրքական պաշտոնեաներ։ Բուլգարիայում օրէնքն է թագաւորում, և ձեզ նման զրպարտիչ մատնիչները զըզանքից աւելի ոչինչ չեն կարող առաջ բերել։

Պրիստավի մօտ են գտնվում և մի քանի «Շարժումներ», որոնց մէջ իմ մի քանի յօդուածները ստորագծված են կապոյտ մատիտով, ստորագծված է նաեւ իմ «զուարճանում եմ»։ Դրանց տեսնելիս ժպտում եմ. թարգմանում եմ և բացատրում եմ Գուրպէթեանէ ինչ արարած լինելը։ Ժպտում եմ, որովհետեւ Գուրպէթեանը ինքը իր յիմարութիւնովը առիթ է ստեղծում պաշտօնական աեղերում ներկայացնել իրան, ինչ պէս որ կայ։

Բայց կրկին զըզանքի մի զօրեղ ցնցում է անցնում ամբողջ մարմնովս. պատկերանում է ինձ հերոս կոչված Ճանկիւլեանի և զրպարտիչ, մատնիչ Թուրք Գուրպէթեանի գրկախառնումը։ Երկու սողուններ, պաղ, ցուրտ ու լորձիւնոտ, որոնք ապրում են Հայ անունով, որոնք հայ հրապարագրի և յեղափոխականի դիմակներ հագած արատաւորում են այդ սրբազան կոչումները։ Ու երեւակայում եմ. եթէ դրանք Թուրքիայում ապրէին, ինչե՞ր չէին անին իրենց հակառակորդներին...։

Ցուսով եմ որ Գուրպէթ օղլուն և իր արբանեակները այս յօդուածս էլ կը ներկայացնեն կառավարութեան, որպէսզի հս առիթ ունենամ այս էլ թարգմանել, ու միշտ զարճանալ։

ՎԱՐՈՅ

ԴԱՒԱՃԱՆԸ ԻՐ ՃԳՆԱԺԱՄԻՆ ՄԷՋ

Անցեալ փետրվարին Պոլսէն տեղս եկած էր Մաքսուտ անուն երիտասարդ մը. Բնիկ Թոկաթցի և պօլսարնակ։ Իր արտաքին շարժ ու ձեւ, վերաբերուելու կերպը դիւրաւ կռահել պիտի տային ուշադիր դիտողի մը՝ թէ այս սատիճան շողոքորդ ու փոփոխական զգացումներու ենթակայ մէկը՝ անշուշտ քստմնելի ներկենցաղ մըն էր։

Ինքզինքը շատ համակրելի բը նաւորութեան մը տէր ցոյց կուտար ամենուն. քիչ ժամանակի մէջ շատերուն հետ մտերմացած ու սերտ յարաբերութիւններ հաստատած էր։

Երկայնահասակ, սեւ պեխերով ու հազիւ 26.27 տարու կարծիքները հայու մը սրճարանէն երբէք չէր հեռանար. օրն ի բուն հոն կը նստէր եւ ամեն խօսակցութեանց հետաքրքիր կըլլար. գործի մը ձեռնարկելու կամ փնտռելու համար երբէք փոյթ չէր տանիէր, ու երբ իրմէն բացատրութիւն կը պահանջուի բարեկամներու կողմէ՝ կը պատասխանէ թէ «Մանդումէիս» չրջուն թղթակիցն է։

Այսպէս երեք-չորս ամիս կանցնի եւ օր մըն ալ յիշեալ սրճարանին մէջ շշուկ մըն է որ կը տիրէ. «Մաքսուտը մատնիչ է,» կըսեն շատեր, անկէ վերջ այլ եւս չերեւնար այդ սրճարանին մէջ։

Այս դաւաճանը (Մաքսուտ Ա. լանեանը) որ Բարթուղիմէոս եպիսկոպոսի կրթութիւնը առած և անոր ազգանուէր՝ բնոյթէն վարակուած՝ հոս ալ Մուրատեանցի(*) քաջալերութիւնը կը վայելէր կըսուի։

Իզմիրի Դաշնակցական կոմիտէն որ դեռ ցարդ որ եւ է նշանակելի գործունէութիւն մը ցոյց տուած չէր, այլեւս յարմար սեպեց իր գոյութիւնը իմացունել ու ցոյց տալ թէ դաւաճանները պատժելու կերպը գիտէ։ Առաջին անգամ ըլլալով փորձեց այս դաւաճանին կեանքը վերցունել, և ահա այս փորձը յուլիսի 2ին փայլուն յաջողութեամբ պակուեցաւ։

Հազիւ 19 տարու Դաշնակցական ահարեկիչ մը կը մօտենայ այդ դաւաճանին ու ատրճանակի հինգ գնդակներ իրարու եռեւեռ կը տեղացնէ անոր վրայ, որոնցմէ ոչ մին կը վրիպի. ամենքն ալ սոսկալի կերպով կը մխուին անոր կուրծքը, փորը, անդամէջը եւ աճուկները ու գետին կը փռեն զայն։ Ահարեկիչը իր խրոխտ քայլերը կուղղէ դէպ յառաջ, ոչ ոք կը փորձէ ձերբակալել զայն՝ որ ղէնքը ձեռքը բռնած փողոցներուն մէջ կանհետանայ։ Այդ միջոցին բժիշկ մը հանդիպելով կարգիլէ զարնուելոյն արեան հոսումը ու շուտով

(*) Այդ դաւաճանը Իզմիր գալուն պէս Մելքեսեդեկի (տեղացւոց լեզուով մեղքի սէփէթիի) հետ յարաբերութիւն կը հաստատէ, որը աւելի կը խրախուսէ իր վատ գործը յարատեւելու եւ այդ մասին յարկ եղած դիրութիւններ կուտայ անոր, նոյն իսկ անոր խորհրդով էր որ Ամերիկացի Յակոբին եռեւէն երթալով ոստիկանութեան ծանօթացուցած էր զայն։

Յունաց հիւանդանոց փոխադրել կուտայ։ Այդ հիւանդանոցին մէջ միայն քանի մը օրուան կեանք կ՚ունենայ դաւաճանը։

Ասիկայ մեծ սոսկում կը պատճառէ Թուրք կառավարութեան. ի՛նչ յանդգնութիւն, ցերեկ ժամանակ, բազմութեան մէջ այս տեսակ փորձ մը ընել ու անկէ վերջ՝ առանց ձերբակալուելու անյողդողդ քայլերով անցնիլ ու անհետանալ։

Կուսակալը լսելով կը սարսափի, և գէթ դաւաճանին սիրտը շահելու համար լուր կը ղրկէ Յունաց հիւանդանոցի բժշկապետին թէ «դուք ամեն կերպով լաւ հոգացէք, ապագային ձեզ կը գոհացնեմ», ու չի վլանար նաեւ երկու ոսկի տալ ուրիշ յոյն բժշկի մը որպէսզի ելեկտրականութեամբ դաւաճանին կուրծքին ներսի կողմի լուսանկարը հանելով քննէ։

Պէտք է խոստովանիլ որ անկէ առաջ քանի մը անգամ դիմումներ եղած է տեղւոյս համբաւաւոր հայ բժիշկի մը որպէսզի նա ընէ այդ գործողութիւնը, վասնզի անիկա աւելի քաջահմուտ է այդ մասին, սակայն մերժած էր վերջինը։

Դաւաճանը գնդակահար ըլլալէ ետքը կը լսուէր որ, յունաց հիւանդանոցին մէջ անշարժ պառկած, չորս կողմը շարժելու և կտոր մը հաց ուտելու բոլորովին անկարող էր։

Փրկարար գնդակը այնչափ անողոք ու արդար եղած էր որ չարագործին վերջին պղջումը սրտաճմլիկ «ամանաններու հետ դուրս կը բերէր։ Նոր վարնուած օրերուն, դեռ ապրելու յոյսով՝ կուրանար իր դաւաճանութիւնը և կըսէր թէ ոչ մէկուն չար կամեցած էր, սակայն, օրէ օր վիճակը ծանրանալով, երբ կը զգայ այլ եւս թէ մահը անխուսափելի է, իր ճգնաժամին կսկծոտ ամեն բան խոստովանիլ և վա՜յ տալ իրեն։

«Ինձ ի՛նչ պէտք է այս տեսակ ապօրինի գործերու մէջ մտնել կըսէր. միթէ ինձ համար չենք շնորհք գործ կը պակսէ՞ր. վա՜յ ինծի, վա՜յ ինծի. ի՛նչ պէտք Սուլթանի կառավարութեան քմահաճոյքին խաղալիք դառնալ ու ետքէն այս տառապանքներուն ենթարկուիլ։ Ո՞ւր ապրի՛ն այն մարդիկ, որոնք կը փորձեն ինձ նմանները մարդկութեան ապերախտութիւններն համարելով, ջնջել աշխարհէն. ապրի՛ն անոնք, վասնզի մեծ իրաւունքով ու արդարութեամբ կը գործեն...» Յաջորդ առաւօտուն յուլիս 19ին չիք դարձած էր այս աշխարհէն յիշեալ մատնիչին անունը։

Այս երեւոյթը պէտք է խրատական մը ըլլայ այն բոլոր շահի ու փառասիրութեան համար ազգուրաց եղողներուն, որոնք շատ անգամ պատրաստ ըլլալ կը թուին ինքզինքնին Սուլթանի հաւատարիմ հպատակները ցոյց տալու։

* *

Վա՜յ ձեզի, դաւաճաններ, վա՜յ ձեզի, աւելի լաւ էր որ ձեր մայրերը քարեր ծնանէին քան թէ ձեզի պէս վատեր։ Դո՛ւք, վա՛տ մատնիչներ, դուք որ յաւակնութիւնը ունիք թէ պիտի կարողանաք յեղափոխականին առջեւ խոչընդոտ մ՚ըլլալ, մինչեւ այս օր չը հաւատացի՞ք որ յեղափոխականը իր գործին ԱՆՁՆՈՒԷՐՆ է»....

ՏԱՃԱՏ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Զմիւռնիա 30/12 օգոստոս 1902

Քաղաքս յուզուած դրութեան մէջ է. Թուրք լրտեսներ շուկային մէջ կը վխտան տասնեակներով, արուարձանները ցրուած են ոստիկաններ, յոյն թաղերու մէջ գիշեր ցերեկ կերթեւեկեն. ամեն ոք սարսափի մէջ է. Ջոջերը մտնելու կը պատրաստուին. կառավարութիւնը կը հակառակի. ջոջ չկայ որ տրամադիր չըլլայ յեղափոխականներու առաջարկները չընդունի, ժամանակին հակառակողները այսօր եռանդուն յեղափոխականներ դարձած են, դաւալներ, բռնակիրներ, պահապաններ, «մեր կեանքը վտանգի տակ չենք դներ» կըսեն. ազատ համարձակ կը հակառակեն իրենց տիրող առաջարկներուն և սպառնալիքներուն։

Միւս կողմէ ոստիկանութիւնը իր ամբողջ ճիգը կը թափէ տեռորիստները և խռովարար յեղափոխականները ձերբակալելու համար. բանտերը լեցուած են անմեղներով. կառավարութիւնը այսօր լաւ հասկցած է որ Դաշնակցութիւնը լաւ հիմ դրած է քաղաքիս մէջ. հինգ տարուան պատրաստութիւն, վերջապէս երեւան ելաւ կըսէ ժողովուրդը. միջին դասակարգի ուրախութիւնը աննկարագրելի է. ամեն ոք պատահած դէպքի մասին կը խօսի. վաճառատան մէջ կատարե՜լ— բաւական յանդգնութիւն։ Ականատեսները այսպէս կը պատմեն, —վաճառատուն կը մտնեն, ու ֆանելա ունի՞ք կը հարցնեն. այս քանի՞, այս՝ հինգ մէթալիք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

18

ՄԱՍ Ա.

ԳԼՈՒԽ Զ.

—Չէ, Հեղինէ, սիրում եմ. եւ շատ եմ սիրում։ Ու այդ շատ սիրելն է որ ինձ ստիպում է քեզ ամեն բան պարզել. մերկ իրականութիւնը քո առջեւ դնել: Ես հանդիստ մարդ չեմ, կասկածելի եմ. նոյնպէս եւ խաղաղ նստող մարդ չեմ. փոթորիկը իմ գըլխից անպակաս պէտք է լինի. Ես խաղաղութիւն որոնեցի, դիտմամբ եկայ այստեղ մի խուլ անկիւն. բայց զգում եմ որ գիժ արիւնը կրկին սկսում է հոսել երակներիս մէջ. ըմբոստութեան զգացմունքը, որ մեռած էր երեւում, յարութիւն է առնում աւելի բուռն կերպով։ Եւ այսպիսի պայմաններում քեզ նման մի օրիորդի ինձ հետ կապելը, իմ փոթորկալից կեանքի խորտակիչ հոսանքներին յանձնելը ես «անազնւութիւն» եմ համարում, երբ ճիշդը կուզես իմանալ մի քիչ էլ վախենում եմ որ դու չըպէտք է դիմանաս. պէտք է ափսոսաս ներկայ կեանքը։

—Չէ, չէ Տաղիկեան, այդպիսի բաներ մի ասի, մի շարունակիր. ի՞նչ է իմ ներկայ կեանքը. կեր, արբ եւ քնացիր. Դու չես իմանում թէ որքա՛ն վատ եմ զգում ինձ իմ հայրենի տան մէջ, իմ քաղաքում. չես իմանում թէ ինձ շրջապատողները որչափ անգոյն ու տափակ են ինձ համար. Իմ արիւնն էլ գիժ է. ես էլ սիրում եմ կրակ ու բոց. փոթորկալի կեանքը, կեանքը ամբողջ յուզմունքով, ամբողջ նեարդերով. կեանքը որի մի ժամը մի տարի արժենայ։ Եւ այդ տեսակ կեանք միայն դու կարող ես տալ ինձ. Տուր ինձ այդ կեանքը. առ ինձ. տար հետդ, գը՛նանք միասին, ուր ուզում ես. աշխարհի՞ որ ծայրը ցանկանում ես.

—Գնանք, բայց ո՞ւր, Հեղինէս, կեանքը այդ՞, եռուն, ուրիշի համար օգտաւէտ կեանքը լաւ է։ Թերեւս կարողանամ քեզ տալ այդ կեանքը, շատ կարճ ժամանակով: Դանդաղ վառուող մոմը երկար լոյս կը տայ, դանդաղ սահող կեանքը աւելի երկար կը տեւի. Ես իմ կեանքը ուզածիս պէս սահեցնելու իրաւունքը ունեմ, բայց ինչ բարոյական իրաւունք ունեմ քեզ էլ շտապով, անհոգի այրել տալու։

—Դու չունես, Տաղիկեան, իրաւունք իմ կեանքիս ընթացքի ձեւը որոշելու. բայց ես ունեմ. Ու ես ինձ երջանիկ կզգամ միայն այն ժամանակ, երբ իմ եւ քո կեանքը միասին եւ նոյն ուժով կը սահեն։

Ահա տուն ենք հասնում. Անշուշտ այսօր չես կարող մեզ մօտ գալ. բայց վաղը անպատճառ եկ։ Եկ սիրելիս, եկ. հաւատացիր որ երբէ կարելի լինէր, հէնց հիմա քեզ հետ կը գայի. Մեր տանը ես գործ չունեմ. այնտեղ ինձ բոլորովին օտար եմ զգում. Տունը մութն է երեւում. սենեակս մէջ միշտ քու ձայնն է լսւում. Ինչ յիմար սովորութիւններ են դրել մարդիկ. Ինչի ես չը կարողանայի ուղղակի քեզ հետ գալ. զարմանալի բան միթէ սա էլ մի տեսակ գերութիւն չէ՞։ Ասում են թէ գերութիւնը աշխարհից վերացել է։ Ոչ, ամենադաժան մարդը անգամ դեռ գերի է, եթէ ոչ մի ուրիշի ձեռքում, գոնէ աւանդութեան, սովորութեան ճիրաններում։

—Այո, Հեղինէս. այդպէս է. մարդ արարածը բոլորովին ազատ լինելու համար դեռ շատ ժամանակ և դեռ շատ մաքուր լոյս պէտք է։ Մարդին գերի դարձնող օրէնքները, սովորութիւնները, աւանդութիւնները սահող վիլ են դարերի ընթացքում, տեւել են դարեր և նրանց բոլորին էլ խորտակելու համար դարերի ճիգեր պէտք են։ Անհատական ըմբոստացումները դրանց դէմ այնքան են չարժում դրանց ստեղծած ճահիճը, որչափ կանգնած լճակի մէջ նետուած մի քարը ալիքներ է ստեղծում։ Մխիթարականը այն է որ ըմբոստացումները մարդը գերի դարձնող պայմանների դէմ նոյնպէս դարերէ ի վեր գոյութիւն ունեն, եւ դրեթէ զուգընթացաբար զօրեղանում եւ մեծ ծաւալ են ստանում։ Եւ ամեն մի ազնիւ ըմբոստ մարդ աշխարհի մէջ աւելի մեծ դեր է կատարում, քան հազարաւոր համակերպողները։

Հեղինէն ամբողջ ուշադրութիւնը լարած լսում էր Տաղիկեանին. Նրա կուսական սիրտը տրոփում էր մեծ եռանդով. Վերջապէս երբ Տաղիկեանը կանգ առաւ, Հեղինէն շարունակեց.

—Դէ, գնա, էլ մի խօսիր. գնա, հաւատացնում եմ քեզ որ երբէ մի քիչ էլ շարունակես, էլ տուն չեմ վերադառնայ։ Հետդ կը գամ. ինչ փոյթ թէ մարդիկ կը բամբասեն ինձ. ինչ փոյթ որ ծնողքս, ազգականներս եւ հասարակութիւնը ինձ պէտք է հալածեն։ Գնա սիրելիս եւ մտածիր, այժմվանից ծրագիր կազմիր մեր այստեղից միասին հեռանալու մասին։ Միանգամ ընդմիշտ համոզուած եղիր, որ իմ որոշումը վերջնական է. քո բերած պատճառաբանութիւնները չեն կարող փոխել տալ իմ որոշումը. Նրանք միայն քեզ կը նսեմացնեն իմ աչքում։ Իսկ ես ցանկանում եմ որ դու միշտ իմ աչքում բարձր լինես. մանր, անգոյն մարդիկ շատ եմ տեսել ես. ու տեսնում եմ ամեն օր ամեն վայրկեան։ Միջավայրի եւ ինձ շրջապատողների մանրութիւնը ինձ մեռցնում էր, եւ դու կեանք տուիր ինձ։ Հասկանո՞ւմ ես, կեանք։

Մութը արդէն ընկել էր. Հեղինէի աչքերը կրակի պէս փայլում էին. զոյգը մօտեցել էր Հեղինէենց տան պատին. Տաղիկեանը ելեքտրականացել էր. Նրա երեսին էր դիպչում Հեղինէի տաք, այրող շունչը ու Տաղիկեանը չը դիմացաւ. Նա յանկարծակի ջղային շարժումով գրկեց Հեղինէի գլուխը, անյագաբար համբոյրներ դրոշմելով նրա կուսական շրթունքներին, հրացայտ աչքերին և

Շշնջաց.

—Թող քո աստղը լինի Հեղինէ. ապրենք, այրուող եռուն կեանքով. եւ թող այդ կեանքը միայն ժամեր տեւէ։ Մենք այսուհետեւ միասին կը լինենք միշտ. կեանքի վշտերը եւ ուրախութիւնները միասին կը վայելենք. Առ այժմ ցը տեսութիւն իմ հրեշտակ ընկերս։

—Սպասիր, սպասիր, մի քիչ էլ սպասիր մրմնջաց Հեղինէն։

—Ոչ, Հեղինէ, սպասել չի կարելի... ցը տեսութիւն։

(Շարունակելի)

է, այս վեց, աւելի արժան չը կա՞յ. չորս չրլլայ եւն. պաշտօնեան անկասկած ապրանքը հաւնեցնելու կաշխատի. իսկ Գարեգինը քանի մը քայլ անդին, կասկածոտ դիրքի մէջ ակնապիշ կը դիտէ երկու երիտասարդներու շարժուձեւերը. բոպէի մը մէջ հարուած մը—աման աման. — հատ մը ալ—«աման մայրիկ, մեռայ» մազերը քաշելով — և կսկսի փախչիլ վաճառատան մէջ ծակ մը մտնելու համար. տեռորիստները ետեւէն հատ մը ալ. Գարեգինը փողոց կը փախչի. պաշտպան ընկերոջ ութհարուածեանի ձայնը, գնդակներու սուլումը վը՞ժ վը՞ժ հայկապ վաճառատան մէջ ամբողջ պաշտօնեաներ կաներեւութացնէր և յետոյ երկուքնին մէկ փախչող մատնիչի ետեւէն հանելով երկու գնդակ եւս կը տեղատրեն. նոր գնդակներ եւն. և կը մեկնին. ականատեսներ յարձակող տէռորիստի մեկնելու ժամանակ բերնէն լքահոտ և իր փարատեսած են, իսկ պաշտպան ընկերոջ ադիւտի նման գոռալ «աշլելը, եագարըմ սրդի» դեռ ժողովրդի բերանն է.

Մատնիչը վիրաւորուած դեռ կը շարունակէ իր ճամբան մօտակայ «փէշտմալճըլար պաշի»ի գրաբաղլը, ոստիկաններ թէեւ դէպքը բոպէապէս լսած սակայն կը փնտռեն դէպի եղելութեան վայրը մօտենալու. հակառակ ժողովրդի այս կողմէն մեկնեցան—ըսելուն անոնք հակառակ կողմը կը փալեն. ութ հարուածեանի գնդակ մը միզային փամբուշը և ապիքային կարեւոր մասեր ջրթ ու փշուր ըրած էր. գնդակ մը ծիծին, ուրիշ մը վզին. մէկ հատ սրունքին և իրրեւ պարգեւ, մէկ հատ գլխու կողմը. «ախ մեռայ հայրս մայրս . . . ուրիշ ձայն չելաւ. ժողովրդի բերանն «սատկիր». այո՛ սատկիր, մատնիչ դաւաճան.

ԵՐԿԱԹ

ՍԻ ՆԱՍԱԿ

Հայ յեղափոխութեան մէջ սպրդած խաչագող Ճանկիւլեանի իր ձեռքով գրած հրէշային ստերով լի կենսագրականը մէջտեղ դնելուց յետոյ, այդ աղտոտը պատէ պատ է ընկնել և իր ծնունդին ու դրութեան վայելուչ լեզուով իմ մասին վէպ է գրում.

Մենք վէպով չենք խօսում Ճանկիւլեանի լրբութիւնների մասին. այլ իր շաղատանական ձեռքով գրած թղթերով. Այս անգամ էլ մենք հրատարակում ենք նրա նամակից մի կտոր. Այդ նամակը այն ժամանակ է գրված երբ Ճանկիւլեան ահագին դրամներ փնտռելուց յետոյ իր խաչագողական ճամբորդութիւնների համար, Աթէնքում անօթի էր մնացել և բարի Դաշնակցականներին խաբել էր ուզում գործ ստանձնելու պատրուակով.

Այդ նամակը արդէն իմ մօտ էր գտնվում, երբ Ճանկիւլեան Վառնա եկաւ, սկսեց Դաշնակցականների ոտքերը լզել. ինձ համար մինչեւ տունս ամենատոր ծառայի պէս ծխախոտ բերել. Եւ այդ բոլոր ստորութիւնները յանձն էր առնում մի միայն խաբեբայութեամբ Դաշնակցութեան մէջ սպրդելու համար. Սակայն Ճանկիւլեանի այդ բոլոր քծնումները հանդիպեցին իմ արհամարանքին և Ճանկիւլեանին չը յաջողվեց իր խաչագողական ճգտումներով ներս սողալ Դաշնակցութեան մէջ.

Մենք շատ գոհ ենք որ Ճանկիւլեանի պէս չարլատաններին դիմակալերծ ենք անում իր հարազատ ձեռքով գրած գրութիւններով: Մենք շատ գոհ ենք որ Ճանկիւլեանները և Դուրպէթեանները գրկախառնվում են. Մաքրագործումը կրնվելով կարող է կատարվել. և Ճանկիւլեան իր արժանաւոր տեղը գտաւ, ինչ որ և ցանկալի էր. Թող Ճանկիւլեան վէպ գրի. իսկ մենք իրան սեփական գրութիւններով կը ներկայացնենք այդ օյինբազի իսկական դիմագծերը. Ճանկիւլեան լաւ խաբելու համար. նախ Դաշնակցականներին յայտարարում է որ ինքը պատրաստ է երկիր մտնել, և ապա սկսում է անձնական պաշտօն մուրալ: Այս նամակը ինձ ստիպեց առաջին անգամից Ճանկիւլեանին հեռու քշել մեզնից.

ՎԱՐԴՕ

Թիւ 621

Աթէնք Յունիս 29 1899

«. . . . . .

Այդ լիրը պէտք է օր առաջ սատկեցնել, եւ անկէց վերջ սկսել կարգ մը աղտոտներուն որ նոյն իսկ արտասահման կը գտնուին. եթէ կուզենք հրապարակ մաքրուի այսպէս պէտք է ընել. անշուշտ այս բաներուս շուտով պիտի պատասխանես որչափ որ կարելի է.

Գիտես, կը յիշես, որ Եգիպտոս գտնուած միջոցիս կը խորհէինք Վառնա երթալուս մասին յուսալով թէ անպատճառ գործ մը պիտի կարենամ գտնել. ախըր դու իմ յատկութիւններուս ծանօթ ես եւ գիտես թէ ինչ գործ կարող եմ ընել. քանի որ դու այժմ տեղդ կը գտնուիս բաւական ծանօթ ես Վառնայի եւ կամ Պուլկարիոյ նոյն իսկ Ռումանիոյ ուրիշ քաղաքներուն. ուրեմն վստահ եմ որ շուտով պիտի աշխատիս ինձ գործ մը գտնելու, եւ արդէն հետագայ տողերէս կրնաս գաղափար մը կազմել արդի կացութեանս վրայ. Պուլկարիա կամ Ռումանիոյ մէջ առ այժմ գոնէ իմ օրական ապրուստս ձեռք բերելու չափ գործ մը կամ աշխատութիւն մը եւ անկէց վերջ զատակներուս եւ մայրիկիս մասին կը խորհիմ արդէն վստահ եմ որ շուտով պիտի աշխատիս ինձ գործ մը գտնելու այդ տեղը վերջապէս ինչ գործ կըլլայ թող ըլլայ, եթէ այս անգործութիւնս երկար տեւէ վերջս գէշ պիտի ըլլայ.

. . . . . .»

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Ազնիւ ժողովրդներու մէջ մատնութիւնը ամենամեծ յանցանքներէն մին կը համարուի. Կառավարութիւնները ապգային դաւաճանները կը պատժեն ամենախիստ պատիժով.

Ժողովրդները, եթէ հնարաւորութիւնը չեն ունենար մատնիչները ֆիզիքապէս պատժելու, կը պատժեն բարոյապէս. կարհամարեն, զզուանքով կը վերաբերին դէպի այդ կզզելի արարածները, ու անոնց կեանքը անտանելի կը դարձնեն.

Մատնիչը Հայ ժողովրդի մէջ է որ կրնայ հանգիստ կեանք վայելել. Հայ ժողովրդին մէջ չի հալածուիր նոյն իսկ ստախօս մատնիչը, որմէ կը տարբերի իրողութիւն մը մատնողը.

Ցիշենք Ֆիլիպէի գործերը. վաճառական մը կը ծեծուի իր հայհոյութեան պատճառով. խումբ մը հայեր, որոնց մէջ կը գտնուին նաեւ յեղափոխական տիտղոսը կրողներ, կելլան և դիւային կրպարտութիւններ յօրինելով պուլկար կառավարութեան կը դիմեն անմեղ և գործին ոչ մասնակից հայեր պատժել տալու.

Վառնայի մէջ Դուրպէթեան մը կը ծեծուի. բոլորովին անձնական պատճառով, և ատ. Հայ մտաւորը անբարոյականացնող հերոսը կելլայ ու իր լրագրական հակառակորդները զրպարտելով զանոնք մարդասպանել կը ներկայացնէ պուլկար կառավարութեան.

Աղտոտութիւն, սորտնութիւն և խելքի պակասութիւն. ու Պուլկարիոյ հասարակութեան մէջ կը գտնուին մարդիկ, որոնք կրնան այդ յեցերուն երեսը նայիլ, կրնան զանոնք մարդու տեղ դնել.

Օտարները շատ անգամ կըսեն որ մատնութիւնը հայերուն բնորոշիչ յատկութիւններէն մին է. Շատ մը պուլկարներէ ալ լսած եմ այդ բանը. և այսօր Դուրպէթեանները, Մալխասեանները, Ֆիլիպեցի մի քանի հայերը կուգան այդ կարծիքը հաստատելու.

Մատնութեամբ, զրպարտութեամբ հակառակորդին ոչնչացնել մտածելը բարոյական անկմանէն մեծ փոսն է. Ժողովրդի մը մէջ որչափ որ զրպարտիչ մատնիչները շատ ըլլան, այնքան այդ ժողովուրդը ամբողջովին վատ կը ներկայանայ օտարին առջեւ. Եւ ամբողջ հայութիւնը զրպարտիչ մատնիչներու փարախ մը ներկայացնելու մեծ ճիգեր կը թափեն Դուրպէթեան և իր արբանեակները իրենց անձնական օրինակներով.

ԿԷՏ

ՄԱՄՈՒԼԻՆ

Վերջին «Անահիտ»ի մէջ Միութեան խնդրի, Մխիթարի («Էզոք») և Սրեւմտեան Պիւրօյի մասին քննադատականի պէս բան մը կայ.

Պ. Զօպանեան Մխիթարը կը մեղադրէ ոչ անկեղծութեան մէջ ու անոր վերջին հրատարակութիւնները ՁՆաւակար Միութեան խնդրին համար.

Այդ յօդուածին մէջ քանի մը անգամ ալ «Նարժում»ի անունը կը յիշուի.

«Նարժում» ճիշդ է, ուրախութեամբ նկատեց որ «Նոր Կեանք»ի նոր վարիչները հակայեղափոխական այդ թերթը յեղափոխականի վերածեցին. բայց ան չը գիտէր թէ այդ վարիչները օրինաւոր վարիչներ էին, թէ ապօրի՞նի. Մխիթար, որ աւելի վերակազմեալներու ժարդն էր, քան դաշնակցականներու, հրապարակեց որ Վերակազմեալներու նոր կեդրոնը ինքնակոչ էր. ուրեմն շատ բնական էր որ Դաշնակցականներու մէջ կասկած զարթնէր թէ ինքնակոչ կէդրոնի մը հետ վարած բանակցութիւնները կրնային աւելի գէշ հետեւանքներ ունենալ.

Ոչ մէկ Դաշնակցական չէր կրնար համաձայնիլ Աղթիարի հետ բանակցութիւններու մէջ մտնել, թէեւ անոր ժամանակուան կեդրոնը աւելի օրինաւոր ըլլայ. Բայց այդ պատճառ մը չէր կրնար ըլլալ որ Դաշնակցականները վարանումով չը վերաբերէին դէպի ինքնակոչ կեդրոնի մը բանակցութիւնները.

«Նարժում»ի խմբագրութեան կարծիքով եթէ նոր կեդրոնը ինքնակոչ ալ ըլլար, բայց վերջը կարենար իր կուսակցութեան համակրութիւնը գրաւել, ու ինքն իր սխալ ճամբայէն դուրս հանէր, նորէն յարգելի պիտի ըլլար, որովհետեւ նոր կեդրոնին այդ քայլը ազնիւ նպատակով «բուտէթա»մը էր, որովհետեւ յեղափոխական մարմին մը, կազմուէր ոչ յեղափոխականներու ձեռքէն. Բայց ցաւը անոր մէջ էր, որ «Նարժում»ի խմբագրութեան լաւ յայտնի էր թէ ամեն Վերակազմեալներն ալ համակիր

չէին նոր վարիչներուն և չէին ուզեր հրաժարիլ հին վարիչները վռնտելու մտքէն։

Այսօր, երբ Հնչակեանները արդէն միացած են, ուրիշ պատճառներ կան, որոնք Դաշնակցականներուն պիտի ստիպեն խստեմութեամբ վերաբերիլ դէպի Միութեան խնդիրը։ այդ Հնչակեաններուն հակայեղափոխականներու հետ միացած գործելն է։ տեսակ մը բռնի միջոց Դաշնակցութիւնը խոնարհեցնելու համար։ Այս տեսակ երեւոյթներն են որ աւելի արգելք կը հանդիսանան քան «Նարժուշ»ի և «Հայրենիք»ի յօդուածները, որոնք արդիւնք են Հնչակեաններու դէպի Դաշնակցութիւնը բռնած դիրքին։

...

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսոյ մէջ կառավարութեան հրամանով դադրած երեք թերթերը «Մանզ. էֆքեար», «Ուրհանպակ» և «Փունջ» վերսկսեր են իրենց հրատարակութիւնը։

—Բագուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը մօտ օրէն պիտի ձեռնարկէ շինութեան մը Գրիգոր Թումանեանցի ժառանգներուն նուիրած 30 հազար ռուպլիով։ շինութիւնը երկու յարկ պիտի ըլլայ։ վերի յարկին մէջ պիտի գետեղուին հայ աղքատ ընտանիքներ ձրի կամ ժան գինով։ իսկ վարի յարկին մէջ պիտի հաստատուի արհեստանոց մը՝ նոյն աղքատ ընտանիքներուն համար։ հոն պիտի հաստատուին նաեւ ճաշարանը և խոհանոցները։

—Հանգուցեալ բարեբար Գ. Ջանշեանցի մահուան տարեյարձի առթիւ Ռուսիոյ հայ եկեղեցիներու մէջ հոգեհանգստեան պաշտօն և պատարագ մատուցուեր է։

—Ռուսահայ Գրագէտ Ղազարոս Աղայեան իր քառասնամեայ գրական գործունէութեան յոբելեանի առթիւ մօտ հազար ոսկի դրամական նպաստներ ստացեր է։ Հազար ոսկին բաւական դրամ է Աղայեանի վերջին օրերը ապահովելու համար։ իսկ եթէ գրուածներուն հրատարակութիւնն ալ հաստատ հիմերու վրայ դրուի, այն ժամանակ Պ. Գայեան բոլորովին հանգիստ պիտի ըլլայ և ազգը իր պարակտանութիւնը պէտք համակրելի գրագէտը աւելի լայնօրէն կատարած պիտի ըլլայ։

—o—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Անցեալ օրերը գ/չեր ժամանակ Եըլտզի զօրաբաժնի Մարշալ Շէֆքէտ փաշան և չէրքէզ Մէհէմմէտ փաշան Սամսթիոյ մէջ շատ սպաներ ձերբակալեր և ուղղակի Եըլտզ տարեր են։

— Սուլթանը Միացեալ Նահանգներու լիազօր դեսպանին վստահացուցեր է որ բոլոր վիճելի խնդիրները պիտի կարգադրուին, խնդրեր է որ դիմէ Մեծ Վէզիրին և արտաքին գործոց Նախարարին։

— Գերմանական կարեւոր թերթ մը կը հաղորդէ որ իսկապէս Սուլթանի իրատէսով յանձնախումբ մը կազմուած է Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու համար։ Այդ յանձնաժողովը շուտով Մակեդոնիա պիտի երթայ և ինքը պիտի աշխատի բոլորովին նոր մշակուած եւ արդէն Սուլթանի հաւանութիւնը գտած բարենորոգման ծրագիրը իրագործել։

— Սելանիքէն կը հեռագրեն որ կառավարական շրջանակները մեծ յուզումի մէջ են, որովհետեւ Մակեդոնիան գրաւուելու նշաններ կերեւին։ Պուլկարները մեծ պատրաստութեան մէջ են, և քանի մը ժամանակէ ի վեր ռուսական, անգլիական և ֆրանսական նաւատորմիղները կը տեգերին Մակեդոնիոյ ափերուն քովերը։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Քաղաքային ընտրութիւնները կատարուեցան ամբողջ Պուլկարիոյ մէջ։ մեծամասնութիւնը կառավարութիւնը շահած է։

ՌՈՒՍԻԱ

Հունգարական թերթերու գրածին համաձայն Թօլսթոյ մտադիր է Պուքարէսթ երթալ եւ հոն հաստատուիլ։

ԹՐԱՆՍՎԱԱԼ

Պօէր զօրավարը իր կնոջ հետ Լահէ հասեր է եւ մեծ ոգեւորութեամբ ընդունուեր է։

Պօէր զօրավարները եւ ուրիշ պաշտօնական անձինք խորհրդակցութիւն մը ունեցեր են։

—Ուրեխթէի մէջ ալ պօէր զօրավարները խորհրդակցութիւններ ունեցեր են Քրիւկէրի հետ։ իբր թէ Քրիւկէր յանդիմաներ է զօրավարները Թրանսվաալի անկախութիւնը ձեռքէ հանած ըլլալնուն համար։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Փոխարքան անգլիական կառավարութեան կը հեռագրէ թէ մեծ հրաշտութիւնը շարունակելուն համար, օգնութեան կարօտ անձերուն թիւը 40000 հոգիով աւելցած է մէկ շաբթուան մէջ։ օգնութիւն ստացողներուն ամբողջ թիւը 450000ի կը հասնի։

Ոսմպէի նահանգին մէջ կացութիւնը աւելի անտանելի է։

ԱՆՁՆԱՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վեպասաններէն Ռընէ որ Բօն-Ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

21ՐԴ և 22ՐԴ թերթերը

հրատարակուեցան։

Գիրքը շաբաթը երկու թերթ կը հրատարակուի եւ իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի։ Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ։

Վառնայի համար բաժնեգին 1 ֆր.։ Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20։

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը ղրկուին. փոստի ծախքը հրատարակչին վրայ է։ Դիմել հետեւեալ հասցէին՝ **Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.**

Դրամի փոխարէն նամակադրոշմ ալ կ'ընդունուի։

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Հանի Բանամֆо

Ամառնային շրջան

ՎԷՍԷԼՕ

Հայ դերասանական իմբին կողմէ Այս գիշեր ժամը 9 ին պիտի ներկայացուի՝

Ի ՆՊԱՍՏ

Տ. ԳՐԻԳՈՐ և ՏԿՆ. ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԿԱՐՄԻՐ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

խիստ բարոյալից տրամ 6 արար զարդարուն տեսարաններով

Անբախտ էլէնիի դերը պիտի կատարէ Տիկին Յակոբեանը

„Մայր Արաքսիան և „Ծիծեռնակ“ պիտի երգէ Օր. Ռոզալին

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ

Պ.Գ.Յակոբեանի եւ Օր. Ռոզալիի կողմէ

Խիստ ծիծաղաշարժ զաւեշտ

Պ. Ա. Պէնլեանի կողմէ

•

• •

ՊԱՎԷԴ

Օրիորդ Բարասֆոյի կողմանէ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

«ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի „Դիւցազնօրէնդ ի Նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէվ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Ղարիպի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա

—•—

ՊԱՏՐԱՍՏ ՍՈՒՐՃԻ ԳՈՐԾԱՐԱՆ

«Ամազօն»

Բրեսլաւմֆա փողոց Երկրորդ Ապտիլղարահման ճ. մի դիմացը

Ստորագրեալս այսու կուզամ յայտարարել որ հաստատութեանս մէջ մեծ խնամքով և եւրոպական կատարելագործեալ մեքենաներով կը պատրաստուին ամեն ճաշակի յարմարող սուրճի տեսակներն, որք արուեստական անարակելի խարդախութիւններէ ազատ, խառնուրդներէ, քիմիականէ և հակառողջական ազդեցութիւններէ զերծ բլլալով հանդերձ խիստ դիւրամատչելի գներով կը վաճառուին։

Հաստատութեանս այցելողն տեսնելով իմ պատրաստութեան եղանակը և լսելով իմ տալիք բացատրութիւններն միանգամ ընդ միշտ պիտի համոզուի որ պատրաստած սուրճերը կը հաւասարին իրենց յատկութիւններուն ամենէն նրբաճաշակ և խնամոտ ընտանեաց մէջ պատրաստուած սուրճերու մաքրութեան, ինչպէս նաեւ իմ գներու չափաւորութիւնը բաղդատութեան դնելով տուներու մէջ 1 կամ 1/2 քիլօ սուրճի պատրաստութեան համար զոհուած յոգնութեանց, ժամանակի կորուստի և ծախուց հետ ամեն ոք պիտի համոզուի որ հաստատութեանս գոյութիւնը իրական ստուերութիւն մ'է մաքրութեան խնայողութեան և հանգստութեան տեսակէտով։

Յ. Թօփուշեանց

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀԱՑԻ ՀԱՍԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ

Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան հանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար։

Բաժնեգինն է 1 ֆրանք. բօսթի ծախքը հրատարակչին վրայ։

Ստագրութիւնը աւարտելուն գիրքերը կը յանձնուին բաժանորդներուն։

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչի ընկերութեան։

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին։

Մուրաս Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՐՆԱ

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна.